

Դովուրդին ծառայելով։ Եւ խնդիրը ճիշտ այս ծառայութեան, այս գործունէութեան պատասխանառութիւնը դդալու վրայ է։

**Ո՞վ է զգացողը,**

Թարգի ծ. վարդ.



## ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Երկայ թուականի «Արարատ»ի մայիս—յունիս տեսրակում համառօտ տեղեկութիւններ հազորդելով այս ձեռնարկութեան մասին՝ խոստացել էինք աւելի մանրաւման բացատրութիւններ տալ այն ժամանակ, երբ գործը որոշ կազմակերպութիւն ստացած կլինէր։ Այժմ, երբ արդէն բաւական բան արուած է և նոյն իսկ տպագրութեան սկիզբը դրուած՝ կարող ենք մեր խոստումը կատարել։

Ընթերցողները կցանկանան, անշուշտ, ամէնից առաջ մի հարեւանցի տեղեկութիւն ունենալ նախկին հրատարակութիւնների մասին, որպէս զի պարզ լինի, թէ ինչ տեղ պէտք է բռնէ նոցա համեմատութեամբ նոր հրատարակութիւնը։—Թէ ինչ հանգամանքների մէջ և ում ձեռքով եղաւ աստուածաշունչի առաջին տպագրութիւնը՝ նկարագրուած է թերթիս նախլնթաց համարի «Վերածնութեան մըան» յօդուածում։ Այդ տպագրութիւնն սկսուած է 1666 թ.-ին և աւարտած 1668 թ.-ին Ամստերդամ քաղաքում։ Տպագրողը՝ Ոսկան վարդապետ, յառաջաբանում և վերջաբանում իւր ձեռնարկութեան արտաքին պայմանների մասին կարեոր ծանօթութիւններ տալիս է, առանց յիշելու այն ձեռագիր օրինակը, որի վերայ եղել է տպագրութիւնը։ Սակայն քանի որ նոյն 1668 թ.-ին Ոսկ

կան վարդապետի տպագրած Նոր Կտակարանի յիշատակարանում ինքն ասում է. «Բուն նախագաղափարը լեալ է իմով ձեռամբ գծեալ Նոր Կտակարան զկնի Հեթմոյ թագաւորի աստուածաշունչ սրբագրութեանն գաղափար ... »\* և մի թեթև համեմատութիւն նորա տպագրած աստուածաշունչի՝ Ա. Աթոռի մատենադարանում պահուած Հեթում թագաւորի ձեռագրի հետ, ցոյց է տալիս իսկոյն երկուսի կէտ առ կէտ նմանութիւնը. անկասկած այդօրինակն և նախատիպ է եղել նորա և նորան հետեւող հրատարակութիւնների համար. Մինչեւ իսկ Հեթումի ոտանաւոր յիշատակարանը տպուել է այդտեղ ու արտատպուել:

Հեթում Բ. թագաւորի հրամանով նորա գործածութեան համար 1295 թ.-ին գրուած աստուածաշունչը նուրբ մագաղաթ է և ընտիր գրչութիւն, կրում է այժմ 157 համարը և պարունակում է ամբողջ Հին ու Նոր Կտակարանը՝ նախագրութիւններով ու ցանկերով, այլ և մի քանի կողմնակի գրուածներ, ոտանաւորներ, յիշատակարաններ. Սրդեօք Ոսկան բուն ձեռագիրը հետը տարել էր, թէ միայն ամբողջ աստուածաշունչի իւրով ձեռամբ զըծեալ օրինակը հետն ունէր՝ դժուար է ասել. Հաւանական է առաջինը, որովհետեւ Հեթումի աստուածաշունչը մենք գտնում ենք ծայրէ ի ծայր սրբագրուած ու փոփոխութիւնների ենթարկուած մի օտար գրչով, որ լուսանցքներում համաբարբառ է աւելացրել, տողամէջ սրբագրութիւններ արել, տնատել ևն. Այդ գրին անշուշտ ուրիշ մէկը չէ, բայց եթէ Ոսկան, շատերի կողմից նկատողութեան է առնուել արդէն և երբեմն չափից աւելի խստութեամբ դատապարտուել Ոսկանի հրատարակութեան գըլխաւոր թերութիւնը, որ նա լատիններէն թարգմանութեան հետեւլով՝ աղճատել է շատ տեղ ձեռքում ունեցած հայերէն օրինակը և կամայական փոփոխութիւններ մտցրել նորա մէջ. Այդ փոփոխութիւններն ահա նա արել է բուն

\* Տես. Հայկական մատենադիտութիւն. Վենետիկ, 1883.

Էջ 502. բուն օրինակը չունինք ձեռքի տակ:

ձեռագրի վերայ՝ պատրաստելով ու յարմարեցնելով այն տպագրութեան համար, և բոլոր նորա անոնեղի որբագրութիւնները մտել են ի հարկէ տպագրի մէջ։ Սակայն բարեբաղդաբար նա դործ է ունեցել մի ընտիր օրինակի հետ և բաւական զգուշութեամբ է շարժել. գրուածքի բուն իմաստն ու լեզուն նա քիչ է փոխել, այլ միայն արտաքին տառական սրբագրութիւններ է արել, կամենաւ լով միակերպութիւն մտցնել նոյն խօսքի զանազան ընթերւ ցուածների մէջ և ուղղել այն սխալները, որ կարծում էր թէ գրչագիրներից են։ Այնպէս որ Ոսկանի հրատարակութիւնը իւր բոլոր թերութիւններով մէկտեղ աւելի արժէ քաւոր է, քան սովորաբար ենթագրում են։ Աստուածաշունչի գրքերը նա դասաւորել է լատիներէնի համեմատ. հայերէն ձեռագրի մէջ եղած ցանկերն ու նախագրութիւնները չի տպել և փոխարէնը լատիներէն աստուածաշունչից թարգմանել է իւր ժամանակի աղաւաղ լեզուով մի քանի երկրորդականոն գրքեր, որ այդ ձեռագրում պակաս էին, և մի շարք բացատրական յաւելուածներ ու ցանկեր, որ գործնական դիւրութիւններ պէտք է ընծայէին սուրբ Դրբով պարապողներին։ Այդ բոլոր յաւելուածներն ի հարկէ մեր աշքում արժէք չունին և մեզ համար աւելի ցանկալի էր, որ նա իւր օրինակն անփոփոխ արտատպած լինէր. բայց նա աշխատել է իւր ժամանակի պահանջներին բաւականութիւն տալ, և դործ է դրել նաև այնպիսի աշխատութիւններ (գլուխների բաժանումն, տնատումն և ուրիշ արտաքին յարմարութիւններ) որոնցով ճանապարհ է հարթել և դիւրացրել է յետնորդների գործը։

Աստուածաշունչի երկրորդ տպագրութիւնը եղել է Կ. Պալսում, 1705 թ.-ին՝ «Փ. յօրինակս հնոյ տպեցեալ լուսաւոր հոգի Ոսկան վարդապետի. յար և նման. ոչ աւելի և ոչ նուազ. սակայն մանր գրով» և տպարանս նոյնոյ Ոսկանի վարդապետի լատինացւոյ Պետրոսի»\*—Ոսկանից արտատպաւթիւն է նաև Դ. տպագրութիւնը, որ կատար-

\* Տես. Հայկ. Մատենագիտաւթիւն, էջ 57. Այդ օրինակը չունինք ձեռքի տակ։

ուել է Մխիթար Աբբահօր աշխատութեամբ, Վենետիկում, 1733 թ.-ին։ Ինչպէս վերջում իւր ընդարձակ յիշատակարանի մէջ Աբբահայրը նկարագրում է՝ Ուկանի օրինակը նա համեմատել է 1645 թ.-ին Փարիզում տպուած Եօրնալեզուեան աստուածաշունչի (հարկաւ ոչ ընագրերի, այլ նոցա իւրաքանչիւրի կողքին դրած լատիներէն թարգմանութեան) հետ և օդուտ է քաղել նորանից ակներև սխալներ ուղղելու՝ պէտք եղած զգուշաւորութեամբ, կամ տարբեր ու աւելի հաւանական իմաստներ լուսանցքում նշանակելու։ Յիրաւի նորա տպագրութիւնն աւելի մաքուր է, աւելի նուրբ տառով, «լաւագոյն թղթովք, աղնուագոյն պատկերօք, գեղեցկագոյն ծաղկագրօք, զգուշագոյն սրբագրութեամբ»։ բայց ընդհանրապէս նա ստրկօրէն հետևում է Ուկանին՝ մինչև իսկ շատ տեղ պատկերների գաղափարը նորանից է առնում, և նոր մի առանձին բան իւր կողմից չի աւելացնում։ Անուրանալի է, որ Մխիթարեան ուխտի նշանաւոր հիմնադիրն աստուածաշունչ հրատարակելու դործում շատ պակաս հանճարեղ և ճարտար է դտնուել, քան իւր առաջնորդ ս. Էջմիածնի խեղճ միաբանը։

Դորա փոխարէն բոլորովին նոր և ուղիղ շաւղով ընթացել է նոյն ուխտի անդամներից մէկը՝ Յովհաննէս վարդապետ Զօհրապեան, որի աշխատութեամբ 1805 թ.-ին Վենետիկում լոյս է տեսել աստուածաշունչը կրկնակի դիրքով՝ քառահատոր և միահատոր։ Նա մի կողմ է թողել Ուկանի օրինակը և «տիպ գաղափարի» ընտրել իւր միաբանութեան մատենադարանում դտնուած գրչագիրներից մէկը, որ դրուած է 1319 թ.-ին «Երանեալ վարդապետին Գէորգեա շարահիւսեալ» օրինակից։ Զօհրապեան տարակոյսի մէջ է, թէ ով պէտք է լինի այդ Գէորգ վարդապետը. բայց ինչպէս Հ. Ալիշան նկատել է, ոչ մի տարակոյս լինել չի կարող, որ դա ՓՓ. դարու նշանաւոր՝ մասնաւորապէս գրչութեան արուեստին հմուտ, Գէորգ Ակեռացին է \*։ Մ. Աթոռի մատենադարանում ունինք

\* Տես. Սիսուան, էջ 102—107. Զարպանալեան, Հայկ. հին գպութիւն, Վենետիկ, 1897. էջ 718—723.

Գէորգ Սկեւռացու գրած մի երկաթագիր մագաղաթէ ճաշոց, բայց այդ առաջին, մ.թ. դարու, Գ. Սկեւռացին պիտ լինի, որովհետև յիշատակարանում կարդում ենք ՈԳ(1154) թուականը և գրութեան ձևն ևս շատ հին է. ունինք ԺԴ. դարի Սկեւռացու օրինակից նորա աշակերտների ձեռքով արտադրուած երկու մագաղաթէ բոլորգիր աստուածաշունչներ (օրոնց մասին յետոյ) և ուրիշ նոյն դպրոցից ելած ձեռագիրներ—բացի յիշեալ օրինակից Զօհրապեան ձեռքի տակ է ունեցել նաև վեց ուրիշ գրչագիր աստուածաշունչներ և մի թերի օրինակ. իսկ իններորդ օրինակ համարել է Ոսկանի նախատիպը. սոցանից օգուտ է քաղել բուն օրինակը սըրաբագրելու «ի վրիպանաց գրչին»՝ դնելով թէ նորա ընթերցուածները և թէ միւսների կարեռը երևած տարբերութիւնները ստորեւ լուսանցքում։ Այսպիսով նա տուել է մի նոր գեղեցիկ աշխատութիւն, որի վերայ աւելացրած նաև այն հանգամանքը, որ նա ըստ ամենայնի հաւատարիմ է մնացել իւր բուն օրինակին, ոչ մի կամայական փոխուսութիւն իւր կողմից չի արել, գրքերի դասաւորութիւնն ևս պահել է հայկականի համեմատ, տպագրել ձեռագրներում եղած ցանկերն ու նախադրութիւնները, առանձին գրել այն գրքերը, որոնք հայկական կանոնի մէջ չեն մտել, և այն, նախնեաց՝ ոչ թէ Ոսկանի խժաբարբառ թարգմանութեամբ,—նորա հրատարակութեանն ընծայում են մեծ առաւելութիւն նախընթացների նկատմամբ։ Սակայն Զօհրապեան սխալուում է ենթագրելով, թէ իւր բուն օրինակն անհամեմատ ընտիր է և ըստ ամենայնի նախապատիւ բոլոր միւս օրինակներից, և նա զուր տեղը չի հաւատացել, թէ Ոսկանի գրչագիր գաղափարը Հեթումի թագաւորական օրինակն է եղել։ Նա առհասարակ բաւական անտեղի արհամարհանքով է խօսում Ոսկանի հրատարակութեան մասին, մինչդեռ, ինչպէս Ոսկանի օրինակի, այնպէս և իւր հրատարակութեան ծանօթութիւնների շատ ու շատ ընթերցուածներ անտարակոյս ուղիղ են իւր ընդունածից։ Նա Մխիթարեանց ընդհանուր սովորութեամբ, փոխանակ գրչա-

գիրների անունները տալու ծանօթութեանց մէջ՝ «ումանք», բազումք՝ բառերով է որոշում. բայց կարելի է ենթադրել, թէ ընտիր ընթերցուածների մէծ մասը բերում է իրենց մատենադարանի «երրորդ գրչագրից», որ նա ամէնից աւելի նման է գտնում Ուկանի օրինակին և ի զուր կասկածելի համարում նորա հնութիւնն ու հարազատութիւնը՝ լուսանցքներում «Փռ. ա. Փռ. բ. և լն» նշանակած լինելու պատճառով. մեր մատենադարանի մի շարք հին և ընտիր ձեռագիրներ ևս այդ տեսակ «Փռանկի» գլխակարգութիւն ունին, և գորանով նոցա արժեքը չի պակասում: Թէպէտ ըստ այսմ Ուկանի օրինակը, ուրեմն և գուցէ նորան նմանող այս «Երրորդ գրչագրից», պակաս արժեքաւոր չեն քան նորա ընտրածը, այնուամենայնիւ նա լաւ է արել, որ սկզբից մինչև վերջ մի ձեռագրի է հետեւել. երկու կամ մի քանի գրչագիրների բազգատութեամբ աւելի ուղիղ բնագիր կազմել դժուար թէ յաջողէր նորան, մինչդեռ այսպէս նորա հրատարակութիւնը՝ իւր բուն օրինակի հարազատութեամբ և ծանօթութիւնների առատութեամբ, ահա մօտ մի դար խիստ գնահատելի ծառայութիւն է մատուցանում:

Նատ սխալ էր ուրեմն, որ Ուռւսաց Բիբլիական ժողովը, ձեռնարկելով 1817 թ.-ին տպագրելու աստուածաշունչը հինգերորդ անգամ Ս. Պետերբուրգում՝ գաղափար ընտրել է ոչ թէ Զօհրապեանի, այլ կրկին Ուկանի օրինակը: Կարելի էր կարծել թէ՝ կամենալով արժանագին հրատարակութիւն անել և տարածել հայ ժողովուրդի մէջ, ձեռնարկողները, եկեղեցական տեսակէտից, գերադասել են և, էջմիածնի հեղինակութեամբ լոյս տեսածը կաթոլիկ Միսիթարեանների հրատարակութիւնից. բայց բանն այն է, որ նոքա առել են ոչ թէ բուն Ուկանի տպագրից, այլ Միսիթար Աբբահօր,—և ընդօրինակել են տառացի նոյնութեամբ, հարկաւ աւելի վատ թղթի վերայ և աւելի վատ տառով, միայն թէ բաւականաչափ տառասխաներ աւելացնելով և պատկերները, վերջաբանի յիշատակարաններն ու ցանկերը զեղչելով: Ապա և, մինչև այժմ եղած հրատարա-

կութիւնների մէջ ամէնից անարժէքն այս է — Արժ. Դիւտ ա. քահ. Աղանեան տարիներ առաջ մեր տրամադրութեան ներքոյ է դրել այս հրատարակութեան վերաբերեալ մի դրադրութիւն, որ ուզգել է Պետերբուրգում այլազգեաց լեզուներով աստուածաշունչ տպագրելու համար կազմուած կօմիտէսի նախագահ բնեազ Ալիսանդր Գօլիցին — թէպէտ բովանդակութիւնից և վերնագրից որոշ չէ, թէ ինչ Սրբազնագոյն պետի, բայց հետը կցուած Աստրախանի հայ հոգեորականաց ցուցակից և մի ուրիշ դրութիւնից հետեցնելով — Աստրախանի կամ Ռուսաստանի Հայոց առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոսին՝ այսինքն այն անձին, «որոյ վերահասութեամբն իսկ տպեցաւ յետոյ աստուածաշունց, ինչպէս յիշուած է կազմի երեսում՝ Թարգմանուած են այդտեղ իշխան Գալիցինի երկու թղթերը, որոնց առաջնի մէջ՝ դրուած 1813 թ. յունվար 28-ին, նա տեղեկութիւն է տալիս յիշեալ կօմիտէսի մասին և առաջարկում Սրբազնին՝ «յանձն առնուլ զկոչումն անդամոյ այսր հասարակութեան», և իւր իշխանութեան տակ գտնուող հոգեորականներին ևս յորդորել անդամակցելու և դրամական նուէրներով օժանդակելու գործին Երկրորդ թըղթով՝ դրուած նոյն թուի հոկտեմբեր 18-ին, նա յայտնում է, որ կոմիտէսը «ունելով զիսոկումն սակա մեծի պակասութեան Աստուածաշունչ դրոց ի Հայ լեզու և ցանկալով որքան կարելի է փութով բաւականացուցանել զիափառողս այնոքիմբք մատենիւք, եղ մտանել այժմ առ իլոյս ածել իբրև զ5000 դիրս նոր կտակարանաց ի սոյն լեզու», և որովհետեւ միջոցները սուղ են, նա խնդրում է Սրբազնի օժանդակութիւնը՝ «յօժարեցուցմամբ որպէս զհոգեորական, նմանապէս և զմարմնաւորական անձինս Հայոց դաւանութեան առ բարեկամ տուրս առանձինն յատկապէս վասն ի լոյս ածելոյ ի Հայ լեզու Աստուածաշունչ մատենից»։ Ահա այս թղթին է կցուած վերոյիշեալ հոգեորականաց ցուցակը իրենց նուէրներով մէկտեղ — Յովհաննէս Արքեպիսկոպոս Հայոցն Ռուսաստանեայց՝ 400,100. Մովսէս վարդ. ս. Երուսաղէմայ միաբան՝ 100. Դրիգոր Նոյեմբեր-Գևետեմբեր

վարդ։ 100.—ընդամենը 1700, 100 (?)։ Պէտք է ենա թաղրել ուրեմն, որ Հայերի կողմից, մասնաւորապէս Առարախանցիներից, բաւականաշափ դրամական օգնութիւն է հասել Բիբլիական ժողովին նորա ձեռնարկութեան համար։

Վեցերորդ հրատարակութիւնը եղել է կրկին Միլիթարեանց ձեռքով՝ Վենետիկում, 1860 թ.-ին։ Մի ինքնուրոյն և նոր տեսակի հրատարակութիւն է այս, որի ձեռանարկողն ու աշխատասիրողը՝ բազմահմուտ Հ. Արսէն Բագրատունին, ոչինչ չի ասում յառաջաբանով կամ վերջաբանով իւր ձեռնարկութեան արտաքին ու ներքին հանդամանքների մասին, այլ միայն վերնագրի հետ յիշում է, որ լոյս է տեսնում «ըստ միաբան վաղեմի գրչագրաց մերոց և յոյն բնագրաց»։ Այս յիշատակութիւնից արդէն երևումէ, որ նա եղած տպագիրներից ոչ մէկին կուրօրէն չի հետեւել։ Որչափ կարելի է եղրակացնել մի հարեւանցի համեմատութիւնից Զօհրապեանի և Աբբահօր օրինակների հետ՝ նա իրու հիմք է ընդունել ա.-ը և սրբագրել սորան կից տարբերութիւնների և բ.-ի այն ընթերցուածներով, որ իրեն աւելի ուղիղ էին երևում։ Իսկ յունարէն Եօթանասնից թարգմանութիւնից օգտուել է իմաստը ճշտելու, նախապատիւ ընթերցուածները սրոշելու և ուղիղ կէտագրութեան համար։ Մենք անիրաւացի ենք գտնում այն տարածուած կարծիքը, թէ Հ. Արսէն հայերէնը շատ տեղ փախել յարմարեցրել է յունարէնին։ Մեզ յայտնի չէ, թէ նա ինչ չափով գրչագիրներից է օգտուել. ունեցել է արդեօք իրենց մատենադարանի բոլոր կամ մի քանի գրչագիրներն ի նկատի, տող առ տող հետեւել է մէկին ու միւսին։ Բայց չգտանք գոնէ մի ընթերցուած անդամ, որ Զօհրապեանի կամ Աբբահօր օրինակի մէջ չգտնուէր, և նա յունարէնին հետեւելով փոխած կամ աւելացրած լինէր։ Դուրա փոխարէն նկատում ենք այնպիսի նշաններ, որոնք ցոյց են տալիս, թէ նա մինչև իսկ զանազան ընթերցուածների մէջ ընտրութիւն անելիս նախապատութիւնը միշտ յունարէնին յարմարուողին չի տուել։ Օր. Ծնն. ՃԳ. 10.

«Մինչեւ ի գալ ի Զոռրա»—ըստ Զօհրապետանի մի քանի օրինակների մէջ «ի Սեգովր» է, որի համեմատ և սրբագրել է կ. Պոլսի վերջին հրատարակութիւնը. բայց մինչդեռ յունարէնին հետեւողն անպատճառ «Սեգովր» պէտք է գրէր, չ. Արսէն պահել է նախնական «Զոռրա» ընթերցուածը, որը համաձայն է երայական բնագրին (Զոռրա) և միայն այստեղ է մնացել, իսկ միւս տեղերում (օր. Ծնն. ԺԴ. 2 ԺԹ. 22) բոլոր օրինակների մէջ սրբագրուել յարմարեցրուել է յունարէնին. Այսպիսով չ. Արսէն առաջինն է եղել, որ բուն գիտական եղանակով ձեռքի տակ եղած օրինակներից մի ընդհանուր բնագրի է կազմել, և իւր ընդարձակ ըմբոնման ու հայերէնի մեծ հմտութեան շնորհիւ յաջողել է առհասարակ ուղիղը դտնել։ Ցաւալի է միայն, որ նա, ինչպէս յիշեցինք, իւր կատարած աշխատանքի մասին ոչ մի տեղեկութիւն չի հաղորդել՝ ոչ մի միջոց չի տուել բանասէրի ձեռքը բարեփոխութիւնների արժէքն ստուգելու համար։ Այլ և, անծանօթ լինելով երրայական բնագրին՝ նա չի ունեցել իւր ձեռքում ամենակարևոր միջոցը, որով պէտք է կարդացածի սկզբնական բուն խմաստը հասկանար և ըստ այնմ թէ բառերի և թէ կէտագրութեան ընտրութիւն անէր։ Այսուամենայնիւ նորա հրատարակութիւնը սովորական գործածութեան համար մեծ առաւելութիւններ ունի բոլոր նախընթացներից՝ նաև Զօհրապետանից, որի հետեւողութեամբ նա նոյնպէս տպագրել է նախագրութիւններն ու ցանկերը և դրքերի դասաւորութիւնը գրչագիրների համեմատ պահել։

Եօթներորդ և վերջին հրատարակութիւնը\* եղել է 1895 թ.-ին կոստանդնուպոլսում՝ «Ս. Գրոց ընկերութեան միջոցներով և հայագիր ձեռնհաս անձերից կազմած մի յանձնաժողովի աշխատութեամբ»։ Սորա չափանց համառօտ յառաջաբանի տուած տեղեկութիւններից մի քանիսն ընթերցողը կդտնէ պ. Ա. Մ.-ի յօդուածի մէջ,

\* Մե կողմ թողած ի հարկէ աշխարհաբար թարգմանութեան և նոր կտակարանի տպագրութիւնները։

որ ամիսներ առաջ «Արարատ»ի խմբագրութեան էր յանձնուած, և այժմ յարմար առիթ ենք դտնում իլոյս ընծայելու, թէպէտ ամենեին համաձայն չենք նորա կարծիք ներին և նորա առաջարկութեան իրագործումը միանգաւմայն անհնարին ենք համարում:—Յիրաւի, այս հրատարակութեան մի նոր արժանիքն է, որ նորա ձեռնարկողները՝ համակերպելով յիշեալ ընկերութեան պահանջին, ստորև լուսանցքում դրել են երրայականի տարբերութիւնները, որոնք շատ յաճախ նպաստում են աւելի լաւ ըմբռնելու բնագիրը, բայց խիստ սխալ է կարծել, թէ այդ բոլոր տարբերութիւններն առանց բացառութեան ուղիղն են և միշտ նախապատուութիւնը նոցա պէտք է տալ: Նախքիչ չեն այնպիսի տեղեր, ուր հայերէնին ըստ էականի հիմք կազմող Եօթանասնից թարգմանութիւնն անկասկած աւելի ուղիղ ընթերցուածք է տալիս, քան այժմեան երրայական օրինակը, երկրորդ՝ յանձնաժողովի այն անդամը (կամ անդամները), որ համեմատել է մեր աստուածաշունչը երրայերէնի հետ՝ կատարել է այդ գործը, կարելի է ասել, ռամիկ կերպով,—ծանօթ չի եղել ժամանակակից գիտութեան արդիւնքներին, քննադատական եղանակով կատարուած նոր թարգմանութիւններին ու մեկնութիւններին, այլ հետեւել է ընկերութեան հրատարակութիւնների մէջ ընդունուածին՝ բառ առ բառ թարգմանել շատ անգամ, առանց պարզ իմաստ տալու, և նշանակել տարբերութիւններ, որ բոլորովին աւելորդ են (օր. էջ 1. հաստատութիւն—տարածութիւն), որ անվստահելի կամ նոյն խոկակաս հաւանական թարգմանութիւն են, քան հայերէնի տուածը: Ուստի ոչ միայն չի կարելի այդ տարբերութիւնները երբ և իցէ բուն օրինակի մէջ մտցնել, որ մեզ համար իւր դարաւոր հնութեամբը նուիրական է և անձեռնմիսելի և ս. Գրքի գիտութեան համար իւր ինքնուրոյն արժէքն ունեցող մի գործ, այլ նաև իբրև օժանդակիչ, պարզաբանող միջոց՝ շատ պակասաւոր են նոքա:—Գալով բուն օրինակին՝ հրատարակիչներն այս տեղեկութիւնն են հազորդում. «Վասն հայերէն օրինակին, զորոյ զհետ դնացաք,

առեմք եթէ լաւագոյն համարեցաք չերթալ զհետ միոյ միայնոյ օրինակի, այլ որ ինչ մերձաւորագոյնն էր ընաւդին զայն ընտրեցաք ի Հայերէն օրինակս անդ, որ ցարդի լոյս ընծայեալ ենք: Մի հարեւանցի համեմատութիւնից իսկ տեսնում ենք, որ նոցա խսկական օրինակը պէտք է եղած լինի Հ. Արակնի հրատարակութիւնը. բայց երրայեցերէն ընագրից օգտուելով նոքա յիրաւի կէտադրութիւնը, իմաստը շատ տեղ ճշտել են՝ թէպէտ, ինչպէս վերև ակնարկուեցաւ, ոչ միշտ յաջող ընթերցուած ընտրել: Այսուամենայնիւ մեծ խնտիքով կատարուած աշխատութիւնն է այս և սովորական գործածութեան համար ըստ ամենայնի վատահելի ու յարմար: Դլսաւոր անյարմարութիւնն այն է միայն, որ ընկերութեան պահանջի համեմատ չեն տպագրուած Երկրորդականոն գրքերը. իսկ նախադրութեանց տպագրուած շինելը նորա արժէքը ոչնչով չի նուազեցնում:

Արդ, երբ Մ. Ալմուը ձեռնարկում է Աստուածաշունչի մի նոր հրատարակութեան, չէր կարող հարկաւ բաւականանալ եղածներից մէկնումէկը արտապելով, կամ իւր մատենագրաբանի բաղմաթիւ ձեռագիրները թողած՝ տպագիրներ համեմատելով ու կրկին հների նման մի նոր օրինակ պատրաստելով: Բայց և բոլոր ձեռագիրները համեմատելին ու բառի բուն նշանակութեամբ մի գիտնական հրատարակութիւն ընծայելն այնպիսի հսկայական գործ է, որ ներկայ պայմաններում, վախճանական նողատակին հասնելու յուսով՝ սկսել չէր կարելի: Մեզ մնում էր միջին ճանապարհ ընտրել: Մենք շատ շուտով նկատեցինք, որ թէպէտ մեր մատենագրաբանում արդէն լոյս տեսած օրինակներից աւելի ընտիր ձեռագիրներ կան, բայց ոչ այնպիսի մէկ ամենաընթիրը, որ պարզապէս արտատպելով տուած լինէինք բոլոր նախկին հրատարակութիւններից գերազանց մի հրատարակութիւն: Կարելի էր ի հարկէ վերջին երկու հրատարակութիւններից մէկն ու մէկն առնել և այդպիսի մի ընտիր ձեռագրի հետ համեմատելով նորա ուղիղ ընթերցուածները մէջը մտցնել, բարեփոխել սակայն այդ ևս խեղճ բան կլինէր ու աւելի մտքեր հան-

գըստացնելու միջոց, — մի գուցէ մեղադրեն, թէ կաթոլիկուների կամ բողոքականների պատրաստած աստուածաշունչը հայ հաւատացեալների ձեռք ենք տալիս։ Պէտք էր ուշրեմն ընտրել գոնէ մի քանի օրինակներ, որոնք փոխադարձաբար լրացնէին միմեանց։ Բազմակողմանի համեմատութիւններից յետոյ ընտրեցինք սկզբում 19 ձեռագիրներ և նոցանով համեմատեցինք ամբողջ Ծննդոց գերքը։ Բայց երբ վերջնական խմբադրութեանն անցանք, երեաց որ գոցանից մի քանիսը շատ նման են ուրիշներին և դրեթէ ոչ մի փոքր ի շատէ կարեոր նորութիւն չեն տալիս, որ հնագոյն օրինակների մէջ չկենի, ուստի և կարող են առանց այլեւայլութեան մի կողմ գրուել։ Այսպէս հետզհետէ աւելորդները մէջ տեղից հանելով՝ ունեցանք վերջը մեր ձեռքում 10 ձեռագիր, որոնցից երկուսը թերի են (մէկը միայն հնդամատեան, միւսը նաև պատմական գրքերից մի քանիսը պարունակող), իսկ համեմատութիւնը թագաւորութեանց գրքերին հասցնելուց յետոյ դոքա ևս գուրս ելան, ու մնաց միայն 8 ձեռագիր։ Չենք կարող հարկաւ պնդել, թէ այդ 8 ձեռագիրները համեմատելով բոլոր մնացածների պարունակած տարբերութիւններն ամփոփած ենք լինում։ Բայց անում ենք հնարաւորը և վստահ ենք, որ գուրսը քիչ բան կմնայ։ Մանաւանդ մենք չենք բաւականանում այդ ձեռագիրներով և, ուր միջոց ունինք կողմնակի աղքիւներից օգտուելու՝ օգտուում ենք։ Այդպէս՝ չունենալով ոչ մի երկաթագիր, նախ քան ԺԴ. գարու միջոցները գրուած աստուածաշունչ, մենք ունինք մի ընտիրերկաթագիր անթուական ճաշոց, որ ԺԱ—ԺԲ դարերի դործ պէտք է լինի և բաւականաշափ մեծ ու փոքր հաստուածներ է պարունակում Հին կտակարանից (Ծննդոց և Ելից գրքերի սկզբի մի քանի գլուխները և լին)։ Այդ ճաշշոցը (որ մենք Ճ. ենք անուանում) շատ ընթերցուածներ ճշտելու և մեր դործածած մի քանի ձեռագիրներ դնաւ հատելու մեծապէս նպաստեց։ Համեմատեցինք նաև ուրիշ ԺԴ—ԺԴ դարերի ճաշոցներ (որ մենք ընդհանուր ա-

նունով Ճ' 1. Ենք նշանակում), սակայն դոքա շատ աւելի պակաս արժէք ունին։ Բոլորովին աչքից չենք թողնում հարկաւ նաև միւս մի կողմ դրած ձեռագիրները, այլ հարկաւոր դէպքում նոցա օգնութեան ենք դիմում՝ մի աչքի ընկնող ընթերցուած պարզելու համար, և աշխատում ենք նոր ի նորոյ ստուդել, թէ մէկը կամ միւսը չունի արգեօք այնպիսի արժանիքներ, որ սկզբում մեր ուշադրութիւնից փախած լիներ։ Այլ և ո, Գրքի այնպիսի մասեր կան, որոնք գտնուում են թերի և կողմակի ձեռագիրներում, այդպէս, Եսայի մարդարէութեան համար ունինք մի երկաթագիր օրինակ, նորա և միւս մարդարէութիւնների, Առակաց գրքի, Սաղմոսների ևն, համար բազմաթիւ ուրիշ օրինակներ, որոնցից անշուշտ օգուտ կքաղենք ժամանակին։ Իսկ երբ աւետարաններին հասնենք՝ մեր ընտրած ձեռագիրներն այլևս երկրորդական տեղ կբռնեն, և հարկ կլինի համեմատել աւելի երկաթագիր, թ՛—ժ՛ դարերում գրի առնուած օրինակներ, որոնցից բաւական թուով գտնուում են ոչ միայն Մ. Աթոռի մատենադարանում, այլ և մեր երկրի զանազան կողմերում, երբեմն ամենախուլ անկիւններում (ինչպէս օր. Մեծշէն, Թալիշ, Բանանց ևն) ցրուած։ Նոր կտակարանի վերաբերմամբ խնդիրն առհասարակ աւելի պարզ է և սկզբնական օրինակը վերականգնելն աւելի դիւրին, որովհետեւ այսուղ թարգմանութիւնն եղել է ուղղակի յունարէնից, որի հետ համեմատելով կարելի է մեծ մասամբ հաստատ որոշել, թէ զանազան ընթերցուածներից որն է ուղիղը, մինչդեռ չին կտակարանի մէջ ամէն քայլափոխում հարց պէտք է տալ՝ արգեօք բուն թարգմանիչներն են այդպէս գրել կամ սրբագրել, թէ յետոյ եկողներ սկզբնական ընթերցուածը, որ ուրիշ թարգմանութիւն է եղել, համաձայնեցրել են Եօթանասնից թարգմանութեան։

Մեր ընտրած ձեռագիրների մէջ առաջին տեղը տուել ենք Յովհաննէս Արքայեզրօր օրինակին, որ պարունակում է ամբողջ աստուածաշունչը և գրած պէտք է լինի 1270 թուին, որովհետեւ Բ. օրինաց գրքից յետոյ մի փոքրիկ

յիշատակարանի մէջ ասուած է, թէ այդ ժամանակ վախաճանուեց Հեթում թագաւորը և յաջորդեց Աւոն։ Այս ձեռագիրը թուղթ է և թէպէտ հնութեամբ երկրորդ տեղն է բռնում, բայց որովհետեւ լիակատար է, ընտիր դրշութիւն և ներկայացնում է մեր ձեռքը հասած աստուածաշունչի ձեռագիրների ամենատարածուած խմբագրութեան առաջին օրինակը, մենք լաւ համարեցինք այս ընդունել իբրև հիմնական։ Յովհաննէս Արքայեղբայրն իւր ժամանակի ամենաուսումնասէր անձերից մէկն է եղել, առանձնապէս հոդ է տարել ընտիր ձեռագիրներ բազմացնելու<sup>\*</sup> և պէտք է ենթագրել, թէ նորա շուրջն արծարծուած գործունէութիւնը մի առանձին տիոլ է ստեղծել աստուածաշունչի ընդօրինակութիւնների համար։ Յանկերն այս օրինակի մէջ յետոյ են մտցրած, ոմն Թորոս Ռաւըինեանց երէցի ձեռքով և Կոստանդին իշխանաց իշխանի հրամանաւ. և որովհետեւ առաջին անդամ այստեղ ենք հանդիպում դոցա և ուրիշ յաւելուածների հետ յետոյ եկող աղդակից օրինակների մէջ արտագրուած տեսնում, կարելի էր դոցա կաղմող համարել նոյն Թորոսին, որ իրեն միայն իբրև «գծող» է յիշում, բայց նա բաւական համբակ դրիչ է երեւում և նորա գրութեան ժամանակն էլ որոշել դժուար է։

Բ. ձեռագիրը (հ. 156)<sup>\*</sup> մագաղաթ, գրուած 1292 թ.-ին Ստեփաննոս Գոյներերիցանց Գէորգ Սկեռացու աշակերտի ձեռքով, հնագոյնն է և կարևորագոյնն ոյն օրինակներից, որոնց համար յիշուում է թէ արտագրուած են նոյն Սկեռացու օրինակից։ Հնութեամբ երկրորդը դոցանից գտնուում է կրկին Մ. Աթոռի մատենագարանում<sup>\*\*</sup>, իսկ երրորդը, ինչպէս յիշեցինք, մայր օրինակ է

\* Տես Սկեռաւան, էջ 144—147. Զարբանալեան Հին դպրութիւն, էջ 711 շ. համ. Սկեռաւան, էջ 104—107. Զարը. 719—723։

\*\* Հ. 159, գրուած 1303 թ.-ին, Սկեռացու Մարտիրոս աշակերտի ձեռքով, Գուներ վանքում (նոր կտուի մասը 1304 թ.-ին հաշատը անապատում)։ մեր գործ դսած ձեռագիրների շարքում ԺԱ.՝ը։

եղել Զօհրապեանի հրատարակութեան համար, թէպէտ Սկևռացին մօտ յարաբերութեան մէջ էր Յովհաննէս Արքայեղբօր հետ, բայց նորա օրինակը՝ ունենալով հանդերձ ընդհանուր գծեր Ա. Ա. ի հետ, տարբեր խմբագրութիւն է ներկայացնում, աւելի զտուած և սրբագրուած, որով և շատ դէպքերում աւելի կարցրած նախնական տիպը:

Դ. Ճեռագիրը Հեթում թագաւորի օրինակն է (հ. 157), որի մասին բաւական խօսք եղաւ վերև, ընտիր մագաղաթ և ընտիր գրչութիւն, գրուած 1295 թ. Ա. Ա. Սահմաննոս գրչի Ճեռքով. կարելի է ասել առաջին երկուսի միջին տեղն է բռնում ոտք՝ մի քանի մասերում աւելի նման առաջնին և միւսներում երկրորդին:—Այս երեք Ճեռագիրները միասին առած կարող էին մեզ նպաստել ուրեմն միայն Ուկանի և Զօհրապեանի հրատարակութեանց միջոցով մեղանում ընդունուած և որոշ ձևակերպութիւն ստացած օրինակն աւելի ևս ճշտելու և զտելու, նոր աչքի ընկնող ընթերցուածներ նոքա շատ չեն աւելացնում:

Դորա փոխարէն առանձին արժէք ունի համեմատութեան համար Դ. Ճեռագիրը, որ հնագոյնն է, թէպէտ հասարակ թուղթ, 1253—55 թ. Ներին Միքայէլ գրչի Ճեռքով գրուած: Դժբաղդաբար այս Ճեռագիրն ամբողջ չէ. Մննդոց սկզբից մինչև ԺԵ 9. կարկատան է, օտար Ճեռքով ուշ ժամանակ աւելացրւած. իսկ Դ. թագաւորութիւնից յետոյ գալիս են Յոր, Դանիէլ, Եսայի, Երկուառան մարդարէներ՝ Զաքարիայի մարդարէութեան մէջ ընդհատուած. միջանկեալ՝ կիսատ մնացած Դանիէլի գրքից յետոյ, կան նաև Եսթեր, Յուդիթ, Տովքիթ, մի քանի ուրիշ գրքերի և Մակարայեցւոց համսուօտութիւն, որի վերջում ասած է, թէ համառօտողն է Յակոբ Ղրիմեցին պծե (1406) թ. Ա. Ա. Բուն Ճեռագրի գրիշը թէպէտ գանդատուում է, որ վատ ժամանակներում ապրելով, տեղից տեղ է թափառել (Կիլիկիոյ վանքերում) շատ զրկանքներ տարել և նոյն իսկ գրչի, ամենատարրական յարմարութիւնների պակաս զգացել, բայց ինչպէս երեւում է նախնական ընտիր օրինակ է ունեցել Ճեռքի տակ, որ բոլոր Ճեռագիրների

մէջ ամէնից կարեոր ընթերցուածներն է տալիս և ամէնից աւելի նպաստում ուղիղը վերականգնելու:

Այս օրինակին բաւական նման է և առհասարակ իւր ընծայած առատ ու բազմապիսի տարբերութիւններով հետաքրքրական հ. 184 ձեռագիրը, որ մենք Զ. տեղն ենք դրել: Ամբողջ աստուածաշունչ է դա կրկին, թուղթ, մի քանի տարբեր գրիչների ձեռքով՝ մասամբ Վարագայ վանքում, մասամբ Աղթամարում գրուած, 1421—22 թ.-ին: Այդ հանգամանքը, որ նա միւսների պէս Կիլիկիայում չէ գրուած, այլ բուն Հայաստանում՝ բացատրում է, թէ ինչու նա սրբագրողների ազգեցութեան չի ենթարկուել և մի առանձին տիպ է պահպանել, որ սակայն զանազան մասերում զանազան արժէք և բնաւորութիւն ունի:

Տարբեր և ինքնուրոյն մի տիպ ներկայացնում է Մխիթար Այրիվանեցու ճառընտիրը, որ պարունակում է ամբողջ աստուածաշունչը՝ նոր կոտակարանը առաջ, Հինը յետոյ գրած: Հ. 944 այս ձեռագիրը, որ մենք Ե. ենք նշանակել, խոշոր թուղթ է, սխալաշատ գրութիւն, բայց կրկին սրբագրուած ու զտուած մի օրինակ է ընծայում և արժէքաւոր ընթերցուածներ շատ ունի: Գրիչը՝ յայտնի պատմիչ Մխիթար Այրիվանեցին, յաճախ իւր անունը յիշել խնդրելով՝ ոչ մի տեղ թուական չի դնում: Բայց որովհետեւ այս ձեռագրում նորա գրի առած պատարագի արարողութեան «Դոհութիւն և փառ» քարոզի մէջ, ինչպէս «Արարատ»ի անցեալ համարում նկատել է Տ. Ռահական վարդապետ, յիշուած են կաթուղիկոս Տ. Յակոբ և թագաւորներ՝ Աւոն և Դեմետրէ, գլութեան ժամանակ պէտք է համարենք անհրաժեշտաբար 1273—1285թ.: Ուրեմն այս ձեռագիրը հնութեամբ երբորդ տեղն է բռնում մեր ունեցածների մէջ: Իւր բազմատեսակ բովանդակութեամբ նա զանազան կողմից պատմական մեծ արժէք ունի և նորա մասին շատ անգամ յիշատակութիւն եղել է «Արարատ»ի մէջ: այստեղ մեզ համար ամէնից կարեոր կէտն այն է, որ իւր իսկ Մխիթար վարդապետի վկայութեան համաձայն, նա արտագրուել է այն ստոյգ զրոց

օրինակից, որ կազմել էր Յովհաննէս Սարկաւագ իմաստասէր վարդապետը Ժ. դարի սկզբներում \*։ Ըստ այսմ, Այրիվանեցու աստուծաշունչի օրինակը ներկայացնում է մի չորրորդ խմբագրութիւն՝ հաշուելով ա. հ. 154 աստուծաշունչի ընծայած նախնական տիպը, բ. Յովհաննէս Արքայեղբօր և գ. Գեորգ Ակեւացու օրինակը,—որ մի շարք առաջնայատկութիւններով և ընտիր ընթերցուածներով յետ չի մնում միւսներից։

Մնացած ձեռագիրներն աւելի կամ պակաս չափով մօտենում են այս օրինակներից մէկին ու միւսին և, որչափ մինչեւ այժմ՝ նկատել կարողացել ենք՝ մի ինքնուրոյն տիպ չեն ընծայում։ Մենք ընտրել ենք այնպիսիները, որ աւելի առատ են տարբերութիւններով։ Այդպէս՝ է. նշանակել ենք հ. 187 ձեռագիրը, որ միայն Հնդամատեանն է պարունակում, թուղթ, Աբրահամ արեղայի համար Մխիթար Գրչի ձեռքով 1447 թ.-ին գրուած։ Դրութեան տեղը յայտնի չէ։—Ը. հ. 181 ձեռագիրն է, լիակատար, թուղթ, խառն կիրակոս րաբունու և նորա եղբօր որդի Յովհաննէսի ձեռքով գրուած 1319 թ.-ին։ Շարունակութեան մէջ (Թագաւորութեանց դրքերից) նկատելով, որ այս ձեռագիրը առանձնապէս կարեւոր տարբերութիւններ չի ընծայում՝ հանեցինք համեմատութիւնից։—Թ. հ. 180 ձեռագիրն է, թուղթ, լիակատար, որ գրուած է 1367—1373 թ.-ին, Հօնաց աշխարհի Սուրդաթ քաղաքում, Դրիգոր քահանայի ձեռքով։ աչքի է ընկնումնորանով, որ ամէնից աւելի է սրբագրուած և յարմարեցրած Եօթանասնից թարգմանութեան։ Ժ. հ. 163 ձեռագիրն է, որ պարունակում է միայն Հնդամատեանը, Յեսու, Դատաւորք, Հռութ, Եսթեր, Յուդիթ և Տովրիթ՝ գրուած է Պօղոս Գրչի ձեռքով, ինչ որ Յովհաննէս՝ Քրիստոսի կենդանի նահատակ երանաւորի բարունապէսի համար, ինչպէս երեսում է, Վրաց սահմաններում, որովհետեւ վերջում ասած է՝ «ի

\* Տես. Կիրակոս Գանձակեցի, Մոսկուա, 1858. էջ 63. Յուշեկը, հատոր Բ. էջ 288։

թվաբերութեանս Հայոց ԶԺ (1465) յօդ. ժե. յայսմամի կալեալ եղեւ թագաւորն Վրաց Դորդի յանաւրէն իշխանէն Նաւրդաւրէն». բայց դժուար է հաստատ կերպով առել՝ ձեռադրի թուականն է այդ, թէ յետոյ աւելացրած։

Բաւականանում ենք առ այժմ այսքանով, և յոյս ունինք, որ միւս ձեռագիրների մասին ծանօթութիւն և առ հասարակ բոլորի մանրամասն նկարագիրն ու ընդարձակ ուսումնասիրութիւնը կտրուի ամբողջ աստուածաշունչն իլոյս ընծայելուց յետոյ. դորա հետ, կարծում ենք, կարելի և կարենոր կլինի մի հատորի մէջ ամփոփել բոլոր նոցա պարունակած նախագրութիւնները, տարականոն և այլ կողմանակի դրուածները, յիշատակարանները։

Նախագրութիւնները ներկայ հրատարակութեան բուն օրինակի մէջ դնել աւելորդ համարուեց, որոհետեւ նոքա ճիշտ պատմական, ժամանակակից քննութեան առաջ արդարացող՝ տեղեկութիւններ չեն պարունակում և բանասիրական նշանակութիւն ունին միայն։ Այդպէս և, բուն օրինակը չծանրաբեռնելու համար՝ թոյլ չտրուեցաւ տարբերութիւնները ստորև լուսանցքում դնել, այլ պէտք է առանձին տպուին և վերջում ամբողջին կցուին։ Լուսանցքում յառաջ են բերուում բնագրից թարգմանաբար միայն այնպիսի հատուածներ, որոնց բուն իմաստը յեղաշրջուած է Եօթանասնից թարգմանութեան կամ մեր օրինակի մէջ և հասկանալի միտք չի տալիս, Բուն օրինակը կազմելու համար մենք վերցրել ենք Կ. Պոլսի վերջին տպագրութիւնը և աչքի առաջ ունենալով՝ մի կողմից ձեռագիրների տարբերութիւններն ամփոփող տետրակը և միւս կողմից երրայեցերէնի բնագիրն ու յունարէն Եօթանասնից թարգմանութիւնը\*, սրբագրում ենք՝ տպագրի մէջ դնելով այն ընթերցուածը, որ ամենաուղիղն է երեսում ձեռագիրների մէջ՝ նոցա համեմատական արժեքին և բնագրի իմաստին նայած։ իսկ իբրև տարբերութիւն նշանա-

\* The old Testament in Greek, by H. B. Swete. Cambridge, 1887—ըստից հրատարակութիւնը։

կում ենք միայն այնպիսիները, որոնք պարզ սխալ կամ թիւրիմացութիւն չեն և արժէք կարող են ունենալ կամ խմաստի, կամ հայերէն լեզուի տեսակէտից։ Այն բառերը, որոնք տարբերութիւն ունին, ցոյց են տրուած աստղա-նիշներով, և որոնք փոխուած են՝ տարբերութիւնների մէջ ՏԱ. կրծատումով են նշանակուում։ Եթէ նոյն տարբերու-թիւնը բազմաթիւ ձեռագիրների մէջ կայ, մենք նշանա-կում ենք միայն առաջին չորսը, եթէ տպագրի մէջ փոխած ողիզ ընթերցուածը միայն մի կամ մի քանի ձեռագիրների մէջ կայ, փակագծի մէջ տպագրի կողքին դնում ենք այդ ձե-ռագիրները. եթէ շատերի կամ բոլորի մէջ միայն տպ.-ի ընթերցուածը. Խմասոր ճշտելու համար մենք նախապա-տուութիւն տալիս ենք այն ընթերցուածներին, որոնք բնագրին աւելի մօտ են՝ շանելով ի հարկէ ոչ մի սրբա-գրութիւն, նոյն իսկ ակներև սխաների համար, եթէ դո-նէ մի ձեռագրի վկայութիւնը չունենանք։ Նախկին հրա-տարակութիւնների մի կարևոր թերութիւնը հէնց այն է, որ բնագիրն ի նկատի չունենալով և միայն յունարէնի հետ համեմատելով՝ շատ անգամ ընտրել են այնպիսի ըն-թերցուածներ, որ յունարէնին աւելի մօտ են, բայց նախ-նականը չեն, այլ ձեռագիրների մէջ սրբագրուած յունա-րէն իմացողների ձեռքով։ Այս գէպքում առանձին ար-ժէք կունենար նաև ասորերէնի համեմատութիւնը, որի վերայ պէտք է կատարուած լինի մեր ս. Դրքի առաջին-թարգմանութիւնը. բայց որովհետև մենք ասորերէնի բա-ւական հմտութիւն չունինք և այժմեան ասորերէն աս-տուածաշունչի տպագիրները շատ հին և մաքուր ձեռա-գիրներից չեն, այլ կրկին շատ տեղ եօթանասնից թարգ-մանութեան համաձայն սրբագրուած օրինակներից՝ բա-ւականանում ենք առ այժմ երրայեցերէնին շարունա-կաբար հետեւելով և ասորերէնի օգնութեան միայն կարևոր-գէպքերում դիմելով. յոյս ունինք ապագայում աւելի-մեծ չափով օգտուելու նորանից, Բնագրի ուղիղ թարգ-մանութեան համար՝ թէ բուն օրինակը ճշտելիս և թէ ստորև ծանօթութիւններ գրելիս, առաջնորդուում ենք

դլիսաւորապէս Պրով., Կառւչի գերմաներէն թարգմանուշթեամբ, որ նորագոյնն է և ամենայաջողը, մի խումբ տռաջնակարգ գիտնականների օգնութեամբ դլուխ հանած \*:  
Աւելի դորան, և մասամբ յունարէնին, հետեւում ենք նաև կէտագրութիւնն ուղղելու համար, որին առանձին կարեւորութիւն ենք տալիս:

Այսպէս, նպատակ դնելով վերականգնել մեր նախնեաց թարգմանութիւնն ըստ չափու հնարաւորութեան և տալ մեր եկեղեցում գործածուող ս. Դրբի ամէնից ճիշտ, մաքուր և մատչելի օրինակ՝ անում ենք մեր ձեռքից եկածը, և շատ շնորհակալ կլինենք ամէն բարեմիտ խորհուրդի համար, որ կտան մեզ ձեռնհաս անձինք՝ այս տողերը կարդալուց կամ իրեւ նմուշ տպուած աստուածաշունչի առաջն թերժն աչքի անցնելուց յետոյ:

Կ. Վ.



## ՀԵՂՆՈՒԹԻՒՆԸ ՅԻՍՈՒԽԻ ԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՕՄԲԻ ՄԼԶ.\*\*

Յիսուսին սովոր ենք սրատկերացնել հանդիսաւոր և վեհ լրջութեան արայայտութիւնն երեսին, մի քիչ խառը խորին տիսրութեան հետ. Նկարիչներն այդպէս էլ նկատում են նրանց և նորա անձի հիմնական խառնուածքին լիովին համապատասխան է, այդ: Սակայն կարելի է, Յիսուսի մէջ

\* Die Heilige Schrift des Alten Testaments, in Verb. mit .., übersetzt und herausgegeben, von E. Kautzsch. Freiburg in B. 1890.

\*\* Այս յօդուածը քաղում ենք Բերլինի համալսարանի փելսոփայութեան հոչակաւոր ուսուցչապետ Ֆրիդրիխ Պաուլ-սէնի մի փոքրեկ գրուածքից. Das Ironische in Jesu Stellung und Rede.